



## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՏԱՆՈՒՄ

ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՐ

**ԿՈՏԱՅՔ.** — «Արարատ» տրեստի կառուցքի սովորումը անցյալ տարվանից սկսված է բնակելի նոր շենքերի կառուցքումը հայրենադարձ հայերի համար: Մինչև այժմ ավարտված և օգտագործման հն հանձնված շենքը՝ Մինչև տարվա վերջը կավարտվի և

3 շենքի կառուցքումը: Բացի այդ, սկսված է նաև 5 նոր շենքի շինարարությունը: Նորակառուցք գեղեցիկ բնակարաններում ներկայումս բնակվում են 42 ներգաղթած ընտանիք:

\*\*\*

Արարակիրում ավարտվում է արտասահմանից վերադարձած հայերի համար կառուցվող 3 երկհարկանի և 2 միահարկանի տըների շինարարությունը: Երկհարկանի տըները ունեն 15-ական բնդարձակ սենյակներ, իսկ միահարկանիները՝ 6-ական: Սեն-

յակներ:

Սենյակների մի մասը արդեն բնակության է հանձնված սովորական նոր քաղաքացիների ընտանիքներին: Ավարտվում է պատերի կառուցքումը ևս մի երկհարկանի տան:

\*\*\*

1948 թվի առաջին եռամսյակում լայն ծավալ կրնդունի արտասահմանից հայրենիք վերադարձած հայերի սնհաւական բնակարանային շինարարությունը: Աշխատավորների ղեպուտատների նրեանի քաղաքային Սովետի գործկումը անհատական բնակարան կառուցողների համար 1080 կտոր

հողամաս է առանձնացրել նորքում և 880 կտոր հողամաս էլ թերիայի անվան շըրջանում: 40 կտոր հողամաս էլ առանձնացվել է քառաբնակարանային տների կողեկտիվ շինարարության համար: Ընդամենը այդ տները կունենան 350 բնակարան:

\*\*\*

**ԱԼԱՎԵՐԴԻ.** — Շրջկենտրոնից Սամահին կայարանը տանող ճանապարհի վրա, ձորակի քացվածքում կառուցվել են մի քանի տասնյակ գեղեցիկ երկհարկանի շենքեր: Այսուղ բնակվում են արտասահմանից հայրենիք վերադարձած մի խումբ հայ ընտանիքներ:

Օրերս Ալավերդու ջրմուղի վարչությունը

Ագարակ-Ալավերդի ջրմուղից 1,5 կիլոմետր երկարությամբ նոր ջրմուղ անցկացրեց, որով այդ թաղամասը և հայրենադարձներն ապահովեցին խմելու մաքուր ջրով:

Մոտ մեկ կիլոմետր երկարությամբ նոր ջրմուղ է կառուցված նաև Լենինյան հանքերի բանվորական ավանում:

\*\*\*

**ԿՈՏԱՅՔ.** — Քանաքեռում կառուցքում է կոշիկի նոր ֆաբրիկա, որը իր առաջին արտադրանքը կտա 1948 թվի հունվար ամսին: Ֆաբրիկայում աշխատում են 300 աշխատավորի:

Ներգաղթած հայերը, Հետագայում, մի քանի ամսից հետո ֆաբրիկան օրական կարտադրի հազար զույգ կոշիկի:

## ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆՆԵՐԸ

— Հնդամյակը կատարել չորս տարում:  
Այս նշանաբանով են աշխատում գյուղգործիքների գործարանի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական անձնակազմը: Առաջավոր ստախանովական բանվորները մտահոգված են ոչ միայն իրենց պլանները ժամկետից շուտ կատարելով այլ և տեխնիկական նոր կատարելագործումների, աշխատանքը հեշտացնելու և երիտասարդ բանվորներին օգնելու ու նրանց առաջավորներին հասցնելու գործով: Այս խնդրում առանձնապես աշխի Ծիկավ գործարանի ստախանովական խառարակությանը:

Չորանյանի և մյուս առաջավոր բանվորների օրինակով սկսեցին աշխատել նաև գործարանի հայրենագարձ բանվորները: Հայրենադարձ բանվորները, սովորական այդ նոր քաղաքացիները, սկսեցին յուրացնել սուցիալիստական աշխատանքի առաջավոր մեթոդները և աշխատել ստախանովականորեն: Գործարանի հայրենադարձ բանվոր Ա. Արարյանը 9 ամսվա ընթացքում կատարել է

2,5 տարվա նորմա: Հոկտեմբերյան Մհձ տոնը նա դիմավորեց 3 տարվա պլանը կատարած: Արարյանի հետ մրցում է նաև ից փոքր եղբայրը Ժիրայրը, որը գործարանում աշխատելով հասել է չորրորդ կարգի վարպետի աստիճանին: Նա իր նորմաները կատարում է 200 տոկոսով: Աշքի է ընկնում նաև Մ. Խաչոյանը, որը 8 ամսում կատարել է 2 տարվա առաջադրանք: Մհձը մյուսի հետ մրցելով առաջավորների շարքն են անցել եղբայրներ Լիոն և Զարություն Ռումյանցները, նրանք իրար շեն զիջում և պլանները միշտ կատարում են միատեսակ, բարձր ցուցանիշներով:

Գործարանը հանդիսանում է նոր կազմեր պատրաստելու լավագույն դպրոց: Կարձամանակ է, ինչ հայրենադարձ Հ. Զարլույանը աշխատանքի է ընդունվել գործարանում, բայց առաջավոր վարպետների օգնությամբ այժմ իր պլանը կատարում է 220-230 տոկոսով:

## ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԻ ԲՐԻԳԱԴԱՆ

**ԿՈՏԱՅՔ.** — Արտասահմանից հայրենիք վերադարձ Զաթալլանների ընտանիքը, կազմելով մեկ բրիգադա, որպես բետոնակործներ աշխատում են Գյումուշգեսի շինարարության Լատի տեղամասում: Նրանք մեծ սիրով ընդունեցին լենինգրադի հայրե-

նասիրական կոչք՝ Հնդամյա պլանը չորս տարում կատարելու մասին: Լայն ծավալելով սոցիալիստական մրցությունը, այժմ բրիգադան օրվա առաջադրանքները շարունակ կատարում է 250—300 տոկոսով:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏՈՒՄ

1948 թվի սեպտեմբերին հայկական նոր գրականության հիմնակիր Խաչատրու Աբոյանի մահվան հարյուրամյակը լրանալու կապակցությամբ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովորը այդ տարեթիվը նշանագործությամար կազմեց հոբելյանական հանձնաժողով հետևյալ կազմով: նախագահ՝ Ն. Կարապետյան, նախադահի տեղակալ՝ Հր. Թողարք և անդամներ՝ Ավ. Խոհհակյան, Վ. Համբարձումյան, Զ. Գրիգորյան, Գ. Դամիկոնյան, Ա. Թերուտյան, Ե. Վարդանյան, Հ. Պողոսյան, Ա. Տերուերյան, Մ. Մկրտչյան, Ստ. Զորյան, Հ. Սիրաս, Գ. Արով, Գ. Սարյան, Ն. Զարյան, Մ. Մարյան, Ա. Հովհաննիսյան, Գ. Դոմբակի, Ա. Բաբայան, Ա. Մարգարյան, Ա. Ղազարյան, Ա. Հովհաննիսյան, Հ. Մկրտչյան, Ա. Մնացականյան, Ա. Զարյան, Ա. Շահինյան, Ս. Գասպարյան, Հ. Ստեփանյան:

Ալբայլան, Գ. Բորյան, Ա. Սոլոմոնյան, Հ. Մամիկոնյան, Գ. Բերուտով, Ե. Վարդանյան, Հ. Պողոսյան, Ա. Տերուերյան, Մ. Մկրտչյան, Ստ. Զորյան, Հ. Սիրաս, Գ. Արով, Գ. Սարյան, Ն. Զարյան, Մ. Մարյան, Ա. Հովհաննիսյան, Գ. Դոմբակի, Ա. Բաբայան, Ա. Մարգարյան, Ա. Ղազարյան, Ա. Հովհաննիսյան, Հ. Մկրտչյան, Ա. Մնացականյան, Ա. Զարյան, Ա. Շահինյան, Ս. Գասպարյան, Հ. Ստեփանյան:

## ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՊՈՐՏՐԵՆ

Նկարիչ Ա. Ավետիսյանն ավարտել է Խ. Աբովյանի պորտրեն, Նկարիչը յուղաներկով գծել է հայ ժողովրդի սիրելի գրողի կերպարը: Նկարիչն իր առաջ խնդիր էր դրել — բացահայտել մեծ լուսավորչի կերպարը նրա ստեղծագործական գործունեության

ժաղկման ժամանակաշրջանում:

Ներկայումս նկարիչ Ավետիսյանը աշխատում է «Արովյան» երեխաների հետո կոմպոզիցիոն նկարի վրա, որը պատկերելու է մեծ գրողին բնության ծոցում՝ երեխաների շըրջանում:

## ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՓՈՍՏԱՆԻՇՆԵՐԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Հայ մեծ դեմոկրատ-լուսավորիչ Խ. Աբովյանի մահվան 100-ամյակին անցկացնող Հորելյանական հանձնաժողովը Մոսկվայից հաղորդագրություն է ստացել, որ ՍՍՌԻՇ

Կապի Մինիստրությունը 1948 թվին լույս է ընծայելու փոստանիշների Խ. Աբովյանի նկարով:

(ՀՀԳ)

### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

ԶՐՈՒՅՅ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԻԵՆՏ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՀԵՏ

Նոյեմբերի 26-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի նիստերի գահին ճառագում է Ակադեմիայի ընդհանուր ժողովը՝ նվիրված Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեզուլուցիայի 30-ամյակին:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պետքենող Վ. Համբարձումյանը 229-ի թղթակցի հետ ուժեցած զրուցում հայունեց հետեւալը.

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ընդհանուր ժողովի նիստերում լավելու են մի շարք զեկուցումներ՝ հասարակական, ֆիզիկո-մաթեմատիկական, բնական, տեխնիկական և բիոլոգիական գիտությունների գծով. նիստերը տևելու ճն շորս օր:

Ժողովի առաջին նիստի գեկուցումները նվիրված են Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեզուլուցիային, սովետական կարգերի հաստատմանը Հայաստանում և սովետական հայագիտության հիմունքներին: Հաջորդ նիստերում հանրագումարի են բերվելու Ակադեմիայի ջրա-էներգետիկ ինստիտուտի գիտնականների և դիտական աշխատողների երկարամյա ուսումնասիրությունների արդյունները՝ Սևանա լճի, Զանգվի և Արաքսի միջին հոսանքի ջրերի օգտագործման զլիափոր պլանն ավարտելու կապակցությամբ, ինչպես նաև լսգելու են զեկուցումներ բիոլոգիական գիտությունների բնուգավառից:

Սևախյում դրված զեկուցումները գրանուրում են Ակադեմիայի գիտական հաստատությունների ձեռք բնած հաջողությունները գիտա-հետազոտական աշխատանքների բրնձագագում, որոնք ունեն տեսական և ակտուալ գործնական նշանակություն մեր ժողովրդական տնտեսության հետագա զարգացման համար:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Նոյեմբերի 26-ին բացվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ընդհանուր ժողովի սեսիան: Ակադեմիայի պետքենությունը Համբարձումյանը իր բացման խոսքում շեշտեց, որ Ակադեմիայի հերթական այս նստաշրջանը, որը նվիրված է Հոկտեմբերի մասնակիությունը 100-ամյակին:

Բնդէանուր ժողովն իր վերջին նիստում ընտրելու է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ և հաստատելու է նոր թղթակից-անդամներ: Բացված է իսկական անդամության շորս ազատ տեղ, առաջադրված է 16 թեկնածություն— հինգը իսկական անդամության համար, 11-ը թղթակից-անդամության համար:

Թղթակիցների առաջադրմանը մասնակցել են, բացի Սովետական Հայաստանի գիտական հիմնարկներից, նաև Մոսկվայի, Թբիլիսիի, Բաքվի գիտական հաստատությունները և առանձին գիտականներ:

Հատկապես պետք է նշել ակադեմիկոսներ Վոլգինի, Խսաշենկոյի, Պալենովի, Պրասունցի մասնակցությունն այդ գործում: Նրանք առաջադրել են մի շարք արժանավոր թեկնածություններ:

Իսկական անդամության համար առաջադրվածների թվում են ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Եղբաս Հասարաթյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Արտաշես Շահինյանը, պատմական գիտությունների գոկտոր Արդար Հովհաննիսյանը, և ուրիշները՝ թղթակից-անդամության համար՝ Հայրինադարձ պրոֆեսոր-գոկտոր Մկրտիչ Տեր-Կարապետյանը, Ֆիլոլոգիական գիտությունների գոկտոր Արարատ Ղարիբյանը, պալուատնեսական գիտությունների գոկտոր Գագիկ Դավթյանը և ուրիշներ:

Այս ընտրությունները մի նոր խթան կհանդիսանան հետագաւում է՝ ավելի լավ հիմքերի վրա զնելու Ակադեմիայի գործունեությունը և գիտա-հետազոտական աշխատանքներում հասնելու նոր նվաճումների:

(ՀՀԳ)

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

բերյան Սոցիալիստական Մեծ Ռեզուլուցիայի 30-ամյակին, զուգագիպում է Հայաստանում սովետական կարգեր հաստատելու 27-րդ տարեկարգին: Նա նշեց պատմական վիթխարի նշանակությունը ունեցող այն նվաճումը՝

ները, որով հայ ժողովուրդը դիմավորում է 27-րդ տարեգարձը:

Ապա անդրադառնալով Ակադեմիայի գործունեությանը նա ասաց.

— Ներկա սեսիան, համընկնում է երեանում Գիտությունների Ակադեմիա հիմնելու 4-րդ տարեգարձին: Սովորական կառավարությունը գիտնականների աշխատանքի համար ստեղծել է բոլոր պարմանները և այսօր մենք կարող ենք զեկուցել երկրին, բոլշեկիյան պարտիային, ընկեր Ստալինին, որ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան հաջողությունների է հասել, որոնք հատկապես նշանակալից են 1947 թվին: Այս տարում մի շաբթ կարեոր աշխատանքներ են կատարվել ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի, գեղոգիայի, կառուցման գործի, միկրոբուլոգիայի, բուսաբանության, գենետիկայի և այլ բնագավառներում: Ենորդիվ նպատակաւաց աշխատանքի մեր գիտական հիմնարկները սկսել են արժեքավոր դիտական արտադրանք տալ:

Անել է մեր նյութական բազման: Միայն այս տարվա ընթացքում ավարտվել ու շահագործման են հանձնվել շատ նոր գիտական լարորատորիաներ, դրանք են բարձր լեռնային լարորատորիան, Բյուրականի աստղադիտարանի աստղաբաշխական աշտարակը, կառուցումների ինստիտուտին կից մեծ լարորատորիան, անասնապահական ինստուտին կից ապիտակուցների և ֆերմենտների լարորատորիան և այլն: Մի շաբթ լարորատորիան կառուցման պողեսում են գրտնվում և շահագործման են հանձնվելու հաջողությունը տարում: Լարորատորիաների կահավորման համար առվող հատկացումները 1948 թվին կհասնի 5 միհիոն ոուբլու, երկու անգամ ամենի քան ընթացիկ տարում:

— Անհրաժեշտ է, — շարունակում է Վ. Համբարձումյանը, — մերացնել մեր աշխատանքում նկատվող թերությունները, ամենի մոտ կանգնել արտադրության ինդիրներին.

— Մենք սովորական գիտնականներս աշխատուի ամենաառաջամայուր գիտության զինաերներն ենք, հանդուրժելի՝ է մեզ համար ստորագրությունը, օտարամոլությունը: Իհարկե ու Ահա մեր առջևն է ամերիկան տառապատճեն ամսագիրը, ոռտեղ դեռեղության է հունական աստղաբաշխների ոիմում Ամերիկաւի աստղաբաշխներն: Նուանք ինդում են իրեն համար հաղուատենեն, սննդենեն, թթվի կտոռատանք, ոռովհետեւ մուղթ շունեն, և վերջապես մատիտներ ուղարկել:

Ահա մյուս կողմից էլ Հայաստանի աստ-

գաբաշխները, որոնք նպատակ են դրել իրենց աստղադիտարանում զետեղել աշխարհում խոշորագույն անարկացիոն տեղեսկրպը:

— Բայց մենք, — շարունակում է Կ. Համբարձումյանը, — շենք հանգստանում մեր հաջողություններով: Յուրաքանչյուր գիտական պետք է ավելի պահանջկոտ լինի իր նկատմամբ: աշխատի ավելի մեծ արդյունքների հասնելու:

Ներկա սեսիան պետք է ընտրի Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի նոր իսկական անդամներ և թղթակից-անդամներ: Մենք հավատացած ենք, որ կընտրվեն գիտականներ, որոնք կօգնեն մեզ գիտական խոշոր պրոբլեմների լուծման գործում: Կաւկած չկա, որ սովորական գիտնականները կկատարեն իրենց պարտքը երկրի հանդեպ և կօգտագործեն իրենց տրամադրված հնարավորությունները, կօգնեն ժողովրդին կատարելու մեծ Ստալինին տված իր խոստումը՝ հնամայակը շորս տարում իրականացնելու մասին:

Վ. Համբարձումյանի եզրափակման խոսքը ժողովականների կողմից ընդունվում է բուն օվացիայով՝ ի պատիվ ժողովակների մեծ առաջնորդ ընկեր Ստալինի:

Ժողովում ընկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեզուլցիան և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում թեմայի մասին զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր Մ. Ներսիսյանը:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեզուլցիան, — ասաց զեկուցողը, — նոր զարագության, սոցիալիզմի դարագության բացեց մարդկային հասարակության պատմության մեջ: Հոկտեմբերյան Ռեզուլցիան միաժամանակ փոշեց նաև հայ ժողովրդին կաշկանդող իմաստերիալիզմի շղթաները, ագատագրեց նորան կապիտալիզմի ձիրաններից, փրկեց ոչշացումից, կյանքի կոչեց նրան ու նրա առաջ բացեց սոցիալիստական զարգացման հեռանկարները: Մեծ Ռեզուլցիայի կազմակերպիչներին և առաջնորդների Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը հանդիսացան հայ ժողովրդու ազատարարները, Զեկուսողը մանրամասնորդն ցուց տվեց այն մեծ ու վճռական դերը, որի խաղաղել է հայ ժողովրդի մեծ բարեկամ Ստալինը Հայաստանում սովետական կարգեր հաստատելու, հայ ժողովրդի վերածնության կազմակերպման գործում:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հսկական անդամ և Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը զեկուցեց

«Աստղային սիստեմների վիճակագրական մեխանիկան» հետաքրքիր թեմայի մասին։ Նա կանգ առավ իր դիտա-հետազոտական աշխատանքների արդյունքների վրա, որը նվիրված է վիճակագրական մեխանիկայի զարգացման մեթոդներին։ Հիմնական եզրակացությունը, որը հանում է Վ. Համբարձումյանը, այն է, որ մեր աստղային սիստեմի բոլոր աստղերը չեն գոյացել մեկ էպոխայում։

Աստղերի առաջացումը, — ասում է նա, — շարժմակվում է նաև ներկա ժամանակներում։

«Աւան լճի, Զանգուի և Արաքսի միջին հոսանքի ջրերի օգտագործման գլխավոր պլանի մասին» գեկուցեց տեխնիկական գիտությունների թեկնածու Մ. Լեբեդյան և Հարակից եւուցի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամի. Եղիազարյանը։ Ջրերի օգտագործման այդ դիմավոր պլանի համաձայն Սևան լճի ջրային ռեժիմի փոփոխություն հետո ստեղծվում է մեխանական ջրա-էներգիայի սիստեմ, որն ապահովելու է Արարատյան դաշտավայրի 225 հազար հեկտար հողերի ոռոգումը և ավելի քան 4,5 միլիոն կիլովատ-ժամ էքս-արտիկներգիայի արոտադրությունը։

«Սովետական հայագիտության հիմունքներ» թեմայի մասին գեկուցում տվեց ֆիլոլոգիական գիտությունների գոկտոր Ա. Ղարիբյանը։ Ակադեմիայի ընդհանուր ժողովում լսվեցին նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Հ. Բունիաթյանի գեկուցումը «Բիոգենամեհների դերը օքսիգացման պրոցեսում» թեմայի մասին և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Զալլախյանի գեկուցումը «Բուլսերի ծաղկումը անդհատ մթության մեջ» թեմայի մասին։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հորելանական ժողովում լսված դեկուցումները ցույց տվեցին Ակադեմիայի և նրա գիտա-հետազոտական հիմնարկների ձեռք բերած հաջողությունները գիտա-հետա-

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻ ՄԻԱՅԻ ԴԵԼԳԱՑԻԱՅԻ ՄԵԿՆՈՒՄԸ ԹՐԻԼԻՍԻ

Հայկական և Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիաների միջև փոխադարձ կապը էլ ավելի ուժեղացնելու նպատակով դեկտեմբերի վերջներին Թրիլիսի մեկնեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հատուկ գելեգացիան։

Դեկտեմբերի կազմի մեջ են՝ Հայկական

զոտական աշխատանքի ծավալման բնագավավում, Հաջողություններ, որոնք խոչըն ազգակ կհանդիսանան մեր ժողովրդական տնտեսության հետագա զարգացման ու բարգավաճման համար։

Իր վերջին նիստում Ակադեմիայի ընդհանուր ժողովը փակ (գաղտնի) քվեարկությամբ ընտրեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ։ — բիոլոգիական գիտությունների բաժանմունքի գծով՝ ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ, բիոլոգիական դիտությունների գոկտոր Եղիազարյանը, Հասթյանին, Գիլիկու-մաթեմատիկական և ամենիկական գիտությունների բաժանմունքի գծով՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Արտաշես Լիպարիտի Շահինյանին և Հասարակական գիտությունների բաժանմունքի գծով՝ պատմական գիտությունների գոկտոր Արգար Ռուբենին Հովհաննեսյանին։

Ընդհանուր ժողովը հաստատեց թղթակից-անդամների կազմը, Հասարակական գիտությունների բաժանմունքի գծով՝ ֆիլոլոգիական գիտությունների գոկտոր Ա. Ս. Ղարիբյանին, գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի գծով՝ գյուղատնտեսական գիտությունների գոկտոր Գ. Ս. Չավթյանին։ և բնագիտական գիտությունների բաժանմունքի գծով՝ Հայրենագործ գիտնական Մ. Ա. Տեր-Կարապետյանին։

Ակադեմիայի ընդհանուր ժողովը քերմուն պաշտպանեց ի. Վ. Եղիազարյանի և Վ. Ա. Համբարձումյանի առաջարկությունը՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պատվավոր անդամ ընտրել Համամինիթնական Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Ս. Ի. Վավիլովին։ Նկատի ունենալով նրա աշքի ընկնող ծառայությունները սովորական գիտությանը և նրա ամենօրյա հոգածությանը կիրարական Ակադեմիային։

Ս. Ի. Վավիլովը միաձայն ընտրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պատվավոր անդամ։

ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Համբարձումյանը, Ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Հովհաննեսյանը, թղթակից-անդամ Ա.

Ղարիբյանը և Ակադեմիայի պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատող՝ պատմական գիտությունների թեկնածու Ա. Երեմյանը:

(229)

### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԾ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԱ ԱԴԵՄԻ ԱՅԼԻ ԴԵԼԵՎԱՆ ԹՐԻԼԻՍԻՈՒՄ

Հայկական ՍՍԾ Գիտությունների Ակադեմիայի ղելեգացիան, որի կազմի մեջ մտնում են Հայկական ՍՍԾ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը, Հայկական ՍՍԾ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Ռ. Հովհաննիսյանը, Հայկական ՍՍԾ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Ս. Ղարիբյանը և ավագ գիտաշխատող Ս. Տ. Երեմյանը, մի քանի օր մնաց Թրիլիսիում:

Ղելեգացիայի նպատակն է—ուժեղացնել գիտական կապերը և աշխատանքի փորձի փոխանակումը եղբայրական երկու ռեսպուլիկաների Գիտությունների Ակադեմիաների միջև։

Գիտական կապի և աշխատանքի փորձի փոխանակման խնդիրը քննարկվեց Վրացական ՍՍԾ Գիտությունների Ակադեմիայում խորհրդակցության ժամանակ։

Խորհրդակցությունը բաց արեց Վրացական ՍՍԾ Գիտությունների Ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի նախագահ, Ակադեմիայի իսկական անդամ Ա. Գ. Շանհձեն, որը նշեց եղբայրական երկու ռեսպուլիկաների, որոնց ժողովուրդները հապած են միմյանց հետ դարավոր բարեկամության կապերով, Գիտությունների Ակադեմիաների միջև աշխատանքի փորձի փոխանակման և մշական կապի հաստատման խոչոր նշանակությունը։

Խորհրդակցության ժամանակ ելույթ ունեցան Հայկական ՍՍԾ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը և աշխատանքի պատմական կապի հաստատման խոչոր նշանակությունը։

Վրացական ՍՍԾ Գիտությունների Ակադեմիայի նոութավելու անվան վրացական գրականության ինստիտուտի ղերեւոր, Ակադեմիայի իսկական անդամ Կ. Ս. Կեկելիձեն, Վրացական ՍՍԾ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ Ն. Ա. Բերձենչվիլին և Գ. Վ. Խաչապուրիձեն, ակադեմիկոս-քարտուղար Ի. Ն. Վեկուան, պրոֆեսոր Լ. Ն. Մելիքսեթրենիլու Վրաստանի և Հայաստանի Գիտությունների Ակադեմիաների միջև կապը ուժեղացնելու համար մի շարք առաջարկներ մտցվեցին։

Որոշվեց 1948 թվի մայիսին Վրացական և Հայկական Գիտությունների Ակադեմիաների համատեղ գիտական սեսիա հրավիրել։ 1948 թվի հունվարին Երևան է մեկնելու Վրացական ՍՍԾ Գիտությունների Ակադեմիայի ղելեգացիան։

Նազմակերպվում է ինքորմացիաների փոխանակություն Գիտությունների Ակադեմիաների աշխատանքի մասին, ինչպես գիտական գրականության փոխանակություն։ (Վ.Հ.)

### ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՌԵՎՈԼՈՒՑԻՍՅԻ 30-ԱՍՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱՌ 80Ի ՑԱՆԴԵՍ

Նոյեմբերի 2-ին Երևանի նկարիչների տանը բացվեց Հայաստանի սովորական կերպարինստանական պուցահանդեսը, նմիրված Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեզուլտատի 30-րդ տարեդարձին։ Հոկտեմբերյան պուցահանդեսին մասնակցում են ավելի քան 90 կերպարինստագետներ՝ գեղանկարիչներ, քանդակագործ-

ներ, գրաֆիկներ, որոնք ներկայացրել են մոտ 300 աշխատանք։

Ցուցահանդեսում աշքի են ընկնում մեծ առաջնորդներ Լինինի և Ստալինի պրոտեներն ու կիսանդրիները, առանձնապես ուշագրավ է Ստալինյան մրցանակի լառուքատ Դ. Նալբանդյանի գործը՝ «Ստալինի պրոտեն»։

\*\*\*

Հայաստանի կերպարվեստագետները մասնակցում են նաև Հոկտեմբերյան Մեծ Ռեզուլտատի 30-ամյակի առթիվ Մոսկվայում կազմակերպվելիք համամիութենական ցուցահանդեսին։

Համամիութենական գեղարվեստական ցուցահանդեսի հանձնաժողովը, իր նիստում քննության առնելով Հայաստանի կերպարվեստագետների ներկայացրած գործերը, ցուցահանդեսի համար ընդունել է Հայա-

տանի 29 կերպարվեստագետների 57 գործ: Մեծ հավանություն են դաել Ստալինյան մրցանակի լաուրեատ, սեսպուրլիկայի ժողովրդական նկարին, ՍՍՌՄ Գեղարվեստից Ակադեմիայի իսկական անդամ Մ. Սարյանի, սեսպուրլիկայի ժողովրդական նկարիչներ Գ. Գյուրջյանի, Հ. Կոչոյանի և

նկարիչ Ա. Ղարիբյանի ներկայացրած գործերը: Հաջողությամբ են ընդունվել նաև երիտասարդ կերպարվեստագետներ Օ. Զարդարյանի, Ա. Բեքարյանի, Ե. Սավայանի, Ռ. Քոլոզյանի, Թ. Չորեքչյանի, Ն. Նիկողոսյանի և ուրիշների գործերը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նոյեմբերի 26-ին բացվեց Հայաստանի կերպարվեստագետների Միության երկրորդ համագումարը: Համագումարը իր վերջին նիստում ընտրեց Հայաստանի Սովետական կերպարվեստագետների Միության նոր վարչություն՝ 17 հոգուց բաղկացած: Վարչության նախագահը ընտրվեց Սահակ Մրցանակի

լառուրեատ, ժողովրդական նկարիչ Մ. Սարյանը:

Կերպարվեստագետների Միության գլխավոր քարտուղարը ընտրվեց արվեստի վաստակավոր գործիչ, քանդակագործ Արա Սարգսյանը, քարտուղարներ ընտրվեցին նկարիչներ Յ. Ազիզյանը և Ե. Հովհաննիսյանը:

## ՍՍՌՄ ԳԵՂԱՐՎԵՍՏԻՑ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԻՆ ՍԵՍԻԱՆ

Երեսորյա աշխատանքից հետո նոյեմբերի 24-ին փոկիվեց ՍՍՌՄ Գեղարվեստից Ակադեմիայի ընդհանուր ժողովի առաջին սեսիան:

Ակադեմիայի պրեզիդենտ Ա. Մ. Գերասիմովը հրապարակեց ՍՍՌՄ Գեղարվեստից

Ակադեմիայի թղթակից-անդամների ընտրությունների արդյունքները:

Գաղտնի քվեարկությամբ ընտրված թրղթակից-անդամների թվում է գտնվում նաև սովետական Հայ նկարիչ, Ստալինյան մրցանակի լառուրեատ Դ. Ա. Նալբանդյանը:

## ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՆ ՀԱՆՁՆՎՈՒՄ ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՆՈՐ ԱԿՈՒՄԲՆԵՐ

Հայկական ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից կուտակուրուսավորական Հիմնարկների գործերի կոմիտեն լայն օգնություն կազմա-

կերպելով ուսապուրլիկայի կոլխոզներում ծավալվող ակումբաշխնարարությանը, այդ ասպարեզում զգալի նվաճումների է հասել:



Ներքին Ախտայի կոլխոզային ակումբը  
կառուցված կոլխոզնիկ Հ. Ավետիսյանի նախագծով

Կատարված աշխատանքների շնորհիվ շահագործման են հանձնվում Ախտայի շրջանի Ն. Ախտա, Սոլակ, Բջնի, Ֆանտան, Գյումուշ-գես գյուղերի Կոլխոզային ակումբները: Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձի տոնական օրերին շահագործման են հանձնվել նաև Թալինի շրջանի՝ Աշնակ, Այնալու, Վ. Սասունաշեն, Ստեփանավանի շրջանի՝ Կաթնաղբյուր, Վարդաբյուր, Հոռարձի, Հոկտեմբերյանի շրջանի՝ Սովետական, Ապարանի շրջանի՝ Բյաներ, Քասախ, Արտաշատի շրջանի՝ Զովաշեն, Բամբակավան, Աշտարակի շրջանի՝ Կոշ, Ագարակ, Սասունիկ, Դովաս-

յանի շրջանի՝ Թագավորուղ, Զուլգաղբյուր, Կարդաղբյուր, Մարտունու շրջանի՝ Գյուտաշեն, Վարդենիկ, Աստղաձոր գյուղերի Կոլխոզային ակումբները:

Կոլխոզային նորակառուց ակումբներ շահագործման են հանձնվելու նաև էջմիածնի, Կոտայքի, Սիսիսնի, Ամասիայի, Միկոյանի, Բասարգելարի, Սպիտակի, Սևանի, Ղարաբաղլարի, Արթիկի, Նոր Բայալեղի, Ալագյազի, Գորիսի, Կալինինոյի, Շամշադինի, Վեդիի, Ալավերդու, Ախուրյանի և Ազիզբեկովի 34 կոլխոզներում:

## ԵՐԳԵՑԻԿ ԿԱՊԵԼԼԱՅԻ ԵԼՈՒՅԹԸ

Նոյեմբերի 2-ին Հայֆիլհարմոնիայի համերգային դահլիճում տեղի ունեցավ նորաստեղծ քառաձախ երգեցիկ կապելլայի առաջին համերգը:

Կապելլան ղեկավարում է ուսապուրիկայի ժողովրդական արտիստ Թ. Ալթոնյանը: Խոմիքը բաղկացած է 80 մարդուց: Առաջին համարում խոմիքը կատարեց Ալեքսանդրովի «Եւանտատա Ստամինի մասին»: Այնու-

հետև կատարվեց սովետահայ կոմպոզիտորների նոր գործերը՝ Կ. Զաքարյանի «Ճար շատրաբի», Արտ. Խաչատրյանի «Կոմերիտական», Ա. Տիր-Ղևոնյանի «Երգ Մոսկվայի մասին»: Բացի այդ կապելլան կատարեց նաև հայ երաժշտության կլասիկների ստեղծագործություններից:

Կապելլայի առաջին ելույթը ընդունվեց շերմորեն:

## ԼԵՆԻՆԻ ՀՐԱՄԱՐԱԿԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ

Սկսվել են լենինի հրապարակի ընդարձակման աշխատանքները Երևանում: Վերացվում են փոստի հին շենքը և նրան կից բնակելի տունը: Այդ շենքերի վերացումից հետո հրապարակի ազատված մասը ասիալատապատվելու և վերնական ձևավորում

է ընդունելու:

Կառավարական Տան և կապի տան միջև անցնելու է Միկոյանի պղղոտայի կառուցվող շարունակությունը, որը այսպիսով կենինի հրապարակը կկապի երկաթուղային կայարանի հետ:

## ԳՈՐԾՈՂ ԶԵՐՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔՆ ԱՆՑԱԿ ՀԱԽԱՄԱԿՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Հայկական ՍՍՌ արդյունաբերության գործող ձեռնարկությունների շարքն անցավ ստալինյան նոր հնգամյակի նորակառուց Երևանի Համբապակու գործարանը:

Փորձարկումը տվեց հիանալի արդյունք: Ստացվեցին հուաշին հախճապակյա իրերը, որոնք իրենց որակով չեն զիջում Միության

առաջավոր գործարանների արտադրանքին: Գործարանում արտադրելու են տարեկան 800 հազար տնտեսական իրեր՝ թիյի և ճաշի ափսեներ, բաժակներ, ջրի գավաթներ, թիյամաններ և ալյու Բացի այդ, արտադրվելու են մեծ քանակությամբ սանիտարական և տեխնիկական գործածության իրեր:

## ԱՂԲՅՈՒՐ-ՀՈՒՇԱՐՁԱՆ

ԿԵԴԻ: — Դեկտեմբերի վերջերին Կիրովի անվան սովորությամբ շահագործման հանձնվեց Երևանից նախիշենան տանող խճուղու եղբին կառուցված նոր աղբյուր-հուշարձանը: Աղ-

բյուրը կառուցված է բազալտից և կարմիր տուֆից ու գարդարված է հայկական կլասիկ ճարտարապետության ոճով և օրնամենտներով:

